

հալւոյն (Ընդհ. 156) եւ առ հասարակ Հայոց համար (Ապար. ԾԵ, է. Ծրծ. Գ), մինչդեռ Տարօնացիին անսուրբ կը համարի զայն (Թէոփ. 279), եւ Ստոյ 1307ի ժողովին գործոց համեմատ՝ բարձր Հայոց վանականներէ ոմանք կը խորշէին անկից, որպէս թէ անոր ճաշակումը պիտի խափանէր դիւաց հալածումն այսահարներէ, որոց դեւերը խոզերու մէջ յղեց Յիսուս (Տուռ. 370): — Պիղծ էին նաեւ շունը (Ընդհ. 158), եւ բոլոր զազանք, ինչպէս զայլը (անդ, 159, '58), արջը (աստ, 459) եւ այլք:

Երկպառակութիւն կար, կ'ըսէ Աւաւկայ որդին, նապաստակի նկատմամբ: Ըստ իւր համոզման՝ որ հրէականն էր (Ղեւտ. ԺԱ, 5), «մեռելոտոյ եւ նապաստակամսի ոչ գոյ բաժանումն, վասն զի մի են նոքա անմաքրութեամբ»: Ընդ հակառակն ուրիշներ չէին ընդունիր այդ սահմանը, այնչափ՝ մինչեւ խնդրոյս պատճառաւ «օցտեալ բաժանել զմիաբանութիւն եկեղեցւոյ ի չար աղանդ հերձուածողացն» (Աւաւ. ՂԵ): Ծործորեցւոյն օրով ալ դեռ խորշելի էր այն (Գ), եւ Ապարանեցւոյն ժամանակակիցք ձիոյ մսի հաւասար կը համարէին (ԽԵ, ԼԸ), զոր Բարսղի ընծայուած կանոնք ալ կը դատապարտեն